

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՃ



Ծրագրեր՝ գյուղատնտեսության կարևորագույն խնդիրների լուծման համար

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանն այցելել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Էկոլոգոնոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ՝ կենտրոնի գործունեությանը ծանոթանալու, գիտական հայտնագործությունները գյուղատնտեսության մեջ կիրառելու հնարավորություններն ու հեռանկարները քննարկելու նպատակով:

Էկոլոգոնոսֆերային հետազոտություններն ուղղված են տարածքների Էկոլոգիական իրավիճակի համալիր գնահատմանը, Էկոլոգիական ռիսկերի որոշմանը և բնական ռեսուրսների կառավարման գործընթացների օպտիմալացմանը: Էկոլոգոնոսֆերային հետազոտությունը հազեցած է ժամանակակից անալիտիկ-լաբորատոր սարքավորումներով, համակարգչային բազայով և գեոներվերով:

ՀՀ ԳԱԱ Էկոլոգոնոսֆերային միջառարկայական խմբերի համատեղ աշխատանքի արդյունքում իրականացվում են մի շարք ծրագրեր, որոնք ունեն կարևոր նշանակություն գյուղատնտեսության կարևորագույն խնդիրների լուծման համար, այդ թվում՝ կայուն ագրոպարենային համակարգերի ձևավորման մոդելների մշակում, սննդամթերքի անվտանգության ռիսկերի գնահատում, գյուղատնտեսական հողահանդակների քիմիական անվտանգության գնահատում, ՀՀ գյուղատնտեսության մեջ Global GAP միջազգային ստանդարտների ներդրում՝ գյուղմթերքի արտահանման ապահովման նպատակով և այլն:

Այցի շրջանակում նախարարը, տնօրեն Արմեն Սաղաթելյանի ուղեկցությամբ, շրջել է կենտրոնում, ծանոթացել ընթացիկ աշխատանքներին և առաջիկա ծրագրերին: Ներկայացնելով «ԱՏՀ և հեռագինման տեխնոլոգիաներ, ժամանակակից մոտեցումներ գյուղատնտեսական խնդիրների լուծման գործում» ծրագիրը՝ ԱՏՀ և հեռագինման բաժնի ղեկավար Շուշանիկ Ասմարյանը նշել է, որ այն իրականացվելու է ծրագրային համապատասխան փաթեթների, տիեզերական նկարների, դրանց վերծանման ծրագրերի բարձրակարգ մասնագետների օժանդակությամբ: Կենտրոնը կիրառում է GIS տիեզերական հեռագինման տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները՝ գյուղատնտեսության ոլորտում, խնդիրների լուծման նպատակով: Շուշանիկ Ասմարյանի խոսքով՝ այս ինտվագիոն տեխնոլոգիաների հնարավորությունները թույլ են տալիս ստեղծել հսկայական տեղեկատվական բազաներ, հավաքագրել փաստացի նյութը և կառավարել տվյալները՝ որոշումների կայացման նպատակով: Կենտրոնն այսօր ունի մի քանի համազգային նախագծերի շնորհիվ հարստացված GIS համակարգի բազա, որը Արմեն Սաղաթելյանի խոսքով, աշխարհի լավագույն կիրառման օրինակներից մեկն է:

2

ՀՈՒՇԱԳԻՐ

Մեկնարկում է լիզինգի ծրագիրը

ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Ռոբերտ Մակարյանը, ՀՀ կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Վահե Հարությունյանը և «ՓՄՁ Ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Արթուր Բադալյանը հուլիսի 14-ին հանդիպել են ստորագրել «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության» լիզինգի պետական աջակցության» ծրագրի իրականացումն ապահովելու նպատակով, համագործակցության վերաբերյալ:

Հուլիսի 14-ին ստորագրման արարողությանը մասնակցում էր ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը: «Հուլիսի 14-ին միջոցով ֆինանսական միջոցներ են հատկացվում լիզինգի տոկոսադրույքի սուբսիդավորման համար, և շահառուներն արդեն կարող են դիմել «ՓՄՁ Ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպության տարածքային ստորաբաժանումներին և գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններին՝ տեղեկատվություն ստանալու և նախնական հայտեր ներկայացնելու համար: Ծրագիրը մեծ հետաքրքրություն է առաջացրել, արդեն կա ձևավորված պահանջարկ գյուղացիական տնտեսությունների շրջանում», - ընդգծել է գյուղատնտեսության նախարարը:

2

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Կառավարությունը հավանություն է տվել Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրին: Ծրագրի հիմնական նպատակը՝ գյուղատնտեսությունում տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես՝ լիզինգային մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարումն է, ինչի արդյունքում նպաստավոր պայմաններ կստեղծվեն գյուղատնտեսական հողատեսքերի արդյունավետ օգտագործման և ապրանքային արտադրության կազմակերպման համար: Ծրագրով նախատեսվում է գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար առաջարկել գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման հնարավորինս մատչելի և արդյունավետ մոտեցումներ: Ծրագրի շրջանակում, գյուղատնտեսական տեխնիկան տնտեսավարողներին կտրամադրվի լիզինգային եղանակով՝ հաշվի առնելով 2013-2016 թթ. դրական փորձն ու արդյունքները: Ծրագրով ներկայացվում են դրա իրագործման հիմնական մոտեցումները, մոնիթորինգը, իրականացման ռիսկերը և դրանց մեղմման հնարավորությունները, ակնկալվող արդյունքները, ֆինանսական գնահատականը: ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը նշել է, որ արդյունքում ակնկալվում է 2017 թ.-ին մոտ 2,2 մլրդ ՀՀ դրամի գյուղատեխնիկայի իրացում: Կարեն Կարապետյանը նշել է, որ գյուղատեխնիկայի ապահովման հարցը կարևորագույն խնդիրներից է. «Մենք իրականում տալիս ենք հնարավորություն գյուղատնտեսությամբ զբաղվող գործարարին, տարեկան 2 տոկոս տոկոսադրույքով լիզինգային պայմաններով ձեռք բերել տեխնիկա, որը կծառայի իր բիզնեսի կառուցմանը»: Վարչապետի խոսքով՝ ստեղծվելու է հատուկ կառույց, որը զբաղվելու է գյուղատնտեսության զարգացման համար առավելագույն ժամանակակից պայմաններ ստեղծելու ուղղությամբ: «Մենք պետք է հստակ իմանանք և հասկանանք, որ եթե մենք գյուղատնտեսության մեջ տեխնոլոգիաների, գյուղմեխանիզացիայի և այլ խնդիրները չլուծենք, ապա ուրիշ տնտեսական արդյունքներ չենք ունենալու», - ընդգծել է Կ. Կարապետյանը և հանձնարարել գյուղատնտեսության նախարարին՝ չբավարարվել ընդունված որոշմամբ և շարունակել ուշադրություն կենտրոնում պահել այդ գործընթացը: «Գյուղատնտեսության նախարարությունը, մարզպետները, բոլորը համայնքներում պետք է այս քարոզչությամբ զբաղվեն, և գյուղատնտեսի ձեռքը բռնած ուղեկցեն և ցույց տան, թե որտեղ և ինչպես է լիզինգը ձևակերպվում և փորձեն ամեն ինչ անել նրան աջակցելու համար», - ընդգծել է կառավարության ղեկավարը:

Գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի տոկոսադրույքների սուբսիդավորման նպատակով, գործադիրի մեկ այլ որոշմամբ գումար կհատկացվի ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը:

Կառավարությունը փոփոխություններ է կատարել նախկինում ընդունած երկու որոշումներում, որով առաջարկվում է կազմակերպությունների պարտավորությունների կատարման համար սահմանված ժամկետը երկարաձգել մինչև սույն թվականի դեկտեմբերի 1-ը՝ 2015-2016 թթ. հողօգտագործողներին մատչելի գներով պարտավորությունների բաշխման ծրագրով նախատեսված, սակայն չբաշխված մնացորդը 2017 թ.-ին, սույն ծրագրի շրջանակում, բաշխումը կազմակերպելու, ինչպես նաև պարտավորությունների կետանցի համար հաշվարկված տույժերի մարումը ապահովելու նպատակով:

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը նշել է, որ նախորդ տարիների պարտավորությունների բաշխումից գոյացել են պարտավորություններ և այս տարի կան ընկերություններ, որոնք կրկին շարունակելու են այն մատակարարել. «Բոլոր շահագրգիռ գերատեսչությունների հետ քննարկելով՝ եկել ենք այն եզրահանգման, որպեսզի չխախտվի այս տարվա մատակարարումը՝ սահմանենք հին պարտքերը գանձելու և վերադարձնելու ժամանակացույց»: Կարևորելով որոշումը՝ գործադիրի ղեկավարը հանձնարարել է գյուղատնտեսության նախարարին լինել ուշադիր:

2

Համագործակցություն	Էջ 4
Տեսակետ	Էջ 5
Մասնագետի խորհուրդը	Էջ 7

ԱՆԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ

Ծրագրեր՝ գյուղատնտեսության կարևորագույն խնդիրների լուծման համար

1

Պայմանավորվածություն է ձեռք բերվել, որպեսզի կենտրոնը մեկշաքայա ժամկետում, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը ներկայացնի փաթեթ՝ GIS համակարգի կիրառման հնարավորությունների և ծառայությունների մատուցման ծրագրի վերաբերյալ՝ քննարկելու գյուղատնտեսության արդիական խնդիրների լուծման համար դրա կիրառման հարցը:

Էկոլոգոստոսֆերային հետազոտությունների կենտրոնի գիտական գծով փոխտնօրեն Լիլիթ Սահակյանն անդրադարձ է կատարել Հայաստանում գյուղատնտեսական հողերի աղտոտվածության խնդրին, ներկայացրել հողերի աղտոտվածության արդյունքներն ու ծրագրի առավելությունը: Տեղեկացնելով, որ կենտրոնը հետազոտություններ է իրականացնում նաև Արցախի Հանրապետությունում՝ Լիլիթ Սահակյանը հավելել է, որ հողերի աղտոտվածության տեսանկյունից Ստեփանակերտը աշխարհի ամենամաքուր շրջաններից մեկն է:

Էկոկենտրոնի սննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվական-վերլուծական կենտրոնի ղեկավար Դավիթ Պիպոյանը ներկայացրել է կենտրոնի հնգամյա գործունեության ձեռքբերումներն ու արդյունքները, մասնավորապես, միջազգային դրամաշնորհների՝ Իտալիայի կառավարության կողմից կարողությունների զարգացման ծրագիրը, որի ընթացքում տեղայնացվել են սննդամթերքի ռիսկերի գնահատման տարբեր բնագավառների միջազգային մեթոդներ: Կենսաէներգետիկայի և կերերի որակի բաժնի պետ Բագրատ Մեծունցն իր հերթին ներկայացրել է գյուղատնտեսական կերահանրակների կենսազանգվածի, մասնավորապես, արոտավայրերի սննդարարության գնահատումը, հերթափոխ արածեցման ժամանակակից մեթոդները:

Ամփոփելով այցի արդյունքները՝ ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանն ընդգծել է կենտրոնի սերտ համագործակցության կարևորությունը՝ ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության ծառայության և Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի հետ՝ ոլորտում առկա խնդիրների հայտնաբերման և լուծման նպատակով:

ՀՈՒՇԱԳԻՐ

1

Մեկնարկում է լիզինգի ծրագիրը



ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Ռոբերտ Մակարյանի խոսքով՝ այլ մասնավոր ֆինանսական կազմակերպություններ ևս ցանկություն են հայտնել ծրագրին մասնակցելու, և նրանց հետ նույնպես առաջիկայում կկնքվեն պայմանագրեր:

Փոխնախարարը հավելել է, որ շահառուներին իրագրելու նպատակով, նախարարության պաշտոնական կայքէջում բացվել է ծրագրի վերաբերյալ առանձին բաժին, որում տեղակայված է տեղեկատվություն լիզինգի տրամադրման պայմանների, լիզինգային ընկերությունների և մատակարար կազմակերպությունների վերաբերյալ, տեղեկատվությունը պարբերաբար թարմացվելու է, այդ թվում՝ կիրառարկվեն նաև գյուղտեխնիկայի տեսականին և գները: «Ծրագիրը թափանցիկ է, ինչպես նաև բաց է և ազատ բոլոր մատակարարների և ֆինանսական կառույցների համար: Բացի այդ, մոնիտորինգի միջոցով, իրականացվելու է տեխնիկայի ուսումնասիրություն՝ դրա օգտագործման արդյունավետությունը պարզելու նպատակով, որի արդյունքները նույնպես հասանելի կլինեն հանրությանը», - նշել է Ռ. Մակարյանը:

«ՓՄԶ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Արթուր Բադալյանի կարծիքով՝ նման պայմաններով լիզինգի տրամադրումը մեր երկրում աննախադեպ է, և շոշափելի դրական արդյունքներ կապահովի:

Ծրագրի շրջանակում տնտեսավարողները կարող են ձեռք բերել տարբեր մակնիշների տրակտորներ, հացահատիկահավաք կոմբայներ, հավաքիչ-մամլիչներ, տրակտորային շարքացաններ, գութաններ, խոտհնձիչներ, կարտոֆիլատնկիչներ, կարտոֆիլաքանդիչներ, կուլտիվատորներ, ֆրեզեր և սրսկիչներ: Գյուղտեխնիկայի ձեռքբերման պայմաններն են՝ 20 % կանխավճար, տարեկան 2 % լիզինգային տոկոսադրույք, 3-10 տարի մարման ժամկետ՝ կախված տեխնիկայի տեսակից:

Ծրագրի շրջանակներում նույն լիզինգառուի կողմից ձեռք բերվող լիզինգի առարկաների ընդհանուր գումարը չպետք է գերազանցի 200,0 մլն դրամը: Լիզինգի առարկաների ընդհանուր գումարը 100 մլն դրամը գերազանցելու դեպքում, լիզինգառուն մինչև լիզինգի պայմանագիր կնքելը, այդ մասին գրավոր տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը:

Ծրագրի իրականացման արդյունքում որոշակիորեն կնորացվի Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմը, ինչը նախադրյալներ կստեղծի առաջիկա տարիներին մատչելի մեխանիզմների կիրառմամբ, տեխնիկայի համալրման առավել ընդգրկուն ծրագրերի իրականացման համար, որոնք զուգահեռ համայնքներին կից մեքենատրակտորային կայաններ ստեղծելու հնարավորություններ կստեղծեն: Բացի այդ, որոշակիորեն կբարձրանա գյուղատնտեսությունում մեքենայացման մակարդակը, տնտեսապես կամրապնդվեն շահառու գյուղացիական տնտեսությունները, և պայմաններ կստեղծվեն վերջիններիս կողմից ապրանքային արտադրության կազմակերպման և հետագա զարգացման համար:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

1

Կարեն Կարապետյանը նշել է, որ այս տարի պարարտանյութի մատակարարման մրցույթի 19 մասնակցից հաղթող է ճանաչվել 2-ը, ինչի արդյունքում սուբսիդավորման գումարից տնտեսվել է 1.2 մլրդ ՀՀ դրամ: Անդրադառնալով գոյացած պարտքերին՝ վարչապետն ընդգծել է, որ դրանք ունեն երկու բաղադրիչ՝ կանխավճար և սուբսիդավորում: «Մենք տալիս ենք արտոնություն, որպեսզի որևէ գյուղատնտես չտուժի: Հետագայում մենք այդ բոլոր հարցերը դիտարկելու ենք: Մենք հսկելու ենք, որ ֆինանսական կարգապահությունը և այն, ինչի շուրջ պայմանավորվում ենք՝ լինի առարկայական»,- նշել է Կարեն Կարապետյանը: Վարչապետն ընդգծել է նաև, որ պետք է հասկանալ գոյացած պարտքերի պատճառները և ցուցաբերել անհատական մոտեցում: «Գուցե մի անգամ ռեալ զիջումների գնանք, էջը փակենք և նոր էջից սկսենք»:

Կառավարությունն ընդունել է համապատասխան որոշում, որով հնարավոր կլինի պայքարի միջոցառումներ իրականացնել 129,2 հազ. հեկտար գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում. գյուղատնտեսության նախարարությունը ձեռք կբերի 10335 կգ թունանյութ: Պայքարի միջոցառումներ իրականացված տարածքներում մկնաման կրծողների կողմից գյուղատնտեսական մշակաբույսերին հասցված վնասը հնարավոր կլինի նվազեցնել շուրջ 85 տոկոսով:

Գործադիրի մեկ այլ որոշմամբ, ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմին կհանձնվի տարածք, ինչի արդյունքում՝ նպաստավոր պայմաններ կստեղծվեն ծառայության աշխատանքի առավել արդյունավետ կազմակերպման, վերապահված վերահսկողական գործառնությունների համակարգված, արագ և օպերատիվ իրականացման համար:

Վարչապետ Կարեն Կարապետյանն այցելել է «Նատֆուդ» մսամթերքի վերամշակման գործարան:

Կառավարության ղեկավարը շրջել է արտադրամասերով և լաբորատորիաներով, հետևել արտադրական գործընթացին, ծանոթացել սպառողին առաջարկվող ապրանքատեսակներին, սանիտարահիգիենիկ համակարգին, ինչպես նաև զարգացման ծրագրերին: Վարչապետին ներկայացվել է, որ սննդի անվտանգության և որակի վերահսկողության ապահովման նպատակով արտադրամասերը, ինչպես նաև անասնաբուժական, մանրէաբանական, ֆիզիկաքիմիական լաբորատորիաները հագեցած են գերծամանակակից սարքավորումներով և տեխնոլոգիաներով: Նշվել է, որ «Նատֆուդ» ՓԲԸ-ն ունի FSSC 22000 սննդի անվտանգության որակի կառավարման համակարգին համապատասխանության վկայական, ինչով և առաջատար դիրք է զբաղեցնում տարածաշրջանում: Արտադրական հզորության ծավալը կազմում է օրական մինչև 40 տոննա, արտադրատեսակներին՝ շուրջ 160, աշխատատեղերի թիվը՝ 180: Առաջիկայում ընկերությունը շուկային ներկայանալու է նոր ապրանքանիշով:

Կարեն Կարապետյանը, ողջունելով ձեռնարկության գործունեությունը, կարևորել է որակի վերահսկողության շարունակական բարձրացմանը և ծրագրերի ընդլայնմանն ուղղված քայլերը:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Ներդրումային ծրագրերի քննարկում

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանն ընդունել է KFW բանկի համայնքային ենթակառուցվածքային ծրագրերի տարածաշրջանային ղեկավար Մարիոն Քնիշի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպմանը ներկա էին նաև բանկի գլխավոր ինժեներ Թոմաս Վոլֆը, KFW բանկի հայաստանյան ներկայացուցիչ Չառա Չատիկյանը:

Ողջունելով հյուրերին՝ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը բարձր է գնահատել Հայաստանում KFW բանկի ծավալած գործունեությունը և օժանդակության ծրագրերի իրականացումը տարբեր ոլորտներում:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են երկկողմ համագործակցությանն առնչվող հարցեր, մասնավորապես՝ ոռոգման համակարգի արդիականացման ու կատարելագործման ծրագրերի շրջանակում:

Անդրադարձ է կատարվել նաև Կապսի ջրամբարի վերակառուցման ծրագրի իրականացմանը, որի շահագործումը հնարավորություն կտա ավելացնել ոռոգելի հողատարածքները: Հանդիպման ընթացքում կողմերը մտքեր են փոխանակել նաև երկուստեք հետաքրքրություն ներկայացնող մի շարք այլ հարցերի շուրջ:

ՓՈԽՆԵՐՈՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայ-կանադական համագործակցության ընդլայնում

Գյուղատնտեսության բնագավառում հայ-կանադական համագործակցության շրջանակներում, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր՝ կանադական Լայվստոք գենետիկ միավորման, խոզաբուծական միավորման, Փորթ Ինթերնեշնլ, անասնակերի և արոտավայրերի միավորման և Հայաստանում ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոնի միջև գյուղատնտեսության ոլորտում համագործակցության վերաբերյալ:

Հուշագիրը ստորագրել են ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Ռոբերտ Մակարյանը, ՀՀ-ում Կանադայի արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Քուրը և Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոնի տնօրեն Գագիկ Սարգսյանը:

Հուշագրի ստորագրումը նպատակ ունի ընդլայնել Հայաստանի և Կանադայի միջև գյուղադրոտում փոխշահավետ համագործակցությունը, մասնավորապես՝ անասնաբուծության և բուսաբուծության ճյուղերում:

Կողմերը համաձայնել են խթանել փոխգործակցությունն անասնակերի և արոտավայրերի, կենդանիների գետտեխնիկայի բարելավման, մսի և կանթամթերքի արտադրության և առևտրի բնագավառներում:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ԲԱՐԵԼԱՎԵԼ ԳՅՈՒՂՄԹԵՐՔԻ
ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանն ընդունել է ՀՀ-ում ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) ներկայացուցիչ Ռայմունդ Յելենին: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են Հայաստանի գյուղատնտեսության ոլորտում ՊԳԿ աջակցությամբ իրականացվող ծրագրերը, նախանշել հետագա համագործակցության շրջանակները, ինչպես նաև դրանց իրականացման համար անհրաժեշտ գործիքները:



Հանդիպումից հետո Իգնատի Առաքելյանն ու Ռայմունդ Յելենին հանդես են եկել համատեղ մամուլի ասուլիսով, որի ընթացքում ներկայացվել են երկկողմ համագործակցության ծրագրերն ու նախաձեռնությունները, ինչպես նաև «Պարենային անվտանգության կարգավիճակը տարածաշրջանում» Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում» զեկույցի հիմնադրույթները:

Անդրադառնալով երկկողմ նախաձեռնություններին՝ նախարար Իգնատի Առաքելյանը, մասնավորապես՝ կարևորել է ֆիլդ-սերագերծ տնկարանի հիմնման ծրագիրը, որի շրջանակում ՀՀ ԳՆ «Երկրագործության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ում նախատեսվում է՝ խաղողի եվրոպական ֆիլդքսերակայուն սորտերի հիման վրա ստեղծել տնկարանային տնտեսություն: Նախարարը նաև տեղեկացրել է, որ ձկնաբուծարաններից մեկում իրականացվելու է նաև պիլոտային ծրագիր՝ ջրի խնայողատար համակարգերի ներդրման ուղղությամբ, որը հետագայում հիմք կհանդիսանա նմանատիպ այլ ծրագրերի մշակման և իրագործման համար: Միաժամանակ Իգնատի Առաքելյանը վստահություն է հայտնել, որ նման ծրագրերը մեծապես կնպաստեն հանրապետությունում ջրային ռեսուրսների տնտեսմանը և ձկնաբուծության ոլորտի զարգացմանը:

Այնուհետև ՀՀ-ում ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) ներկայացուցիչ Ռայմունդ Յելենին համառոտ ներկայացրել է ՊԳԿ կողմից հրապարակված «Պարենային անվտանգության վիճակը տարածաշրջանում» Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում» զեկույցը: «Պարենային անվտանգության վիճակը տարածաշրջանում» Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում» զեկույցը, վերլուծելով տարածաշրջանի երկրների տվյալները, տարբեր հարցերի, մասնավորապես՝ սննդի էներգետիկ արժեքի, թերսնուցման մի շարք ցուցանիշների և սննդակարգի բաղադրության վերաբերյալ, ներկայացնում է երկրների ներկայիս իրավիճակը և առաջարկում բարելավման մի շարք ուղիներ: Տարբեր քաղաքականությունների մշակման և կիրառման արդյունքում Հայաստանում նկատելի է թերսնուցման կտրուկ նվազում: 1990-ական թվականներին այն կազմում էր 27 %, իսկ 2016-ին՝ 8 %, – նշել է Ռայմունդ Յելենին:

Նա նաև հավելել է, որ ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ իրականացնում է մի շարք ծրագրեր, որոնց նպատակն է հնարավորինս նպաստել պարենային ապահովությանը և սննդակարգի հարստացմանը՝ խթանելով տեղական գյուղատնտեսական մթերքի արտադրությունը:

Իր հերթին նախարարը հավելել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը մեծապես կարևորում է սննդամթերքի անվտանգության և որակի բարելավման, հավասարակշռված և վիտամիններով հարուստ սննդի արտադրությունը գյուղատնտեսության ոլորտում: «Մենք այս ոլորտում այսօր շատ խնդիրներ ունենք, և Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության հետ համատեղ, քայլ առ քայլ խստացնելու ենք պահանջները: Մեր հետագա ծրագրերն ուղղված են լինելու գյուղմթերքի և գյուղատնտեսական արտադրանքի որակի բարելավմանը», – ընդգծել է նախարար Իգնատի Առաքելյանը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԼԻԶԻՆԳԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ԿԿԱԶՄԻ 2 ՏՈԿՈՍ

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում հրավիրվել էր քննարկում վարկային կազմակերպությունների և գյուղտեխնիկա ներկրողների ներկայացուցիչների մասնակցությամբ «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության» լիզինգի պետական աջակցության» ծրագրի իրականացմանն առնչվող հարցերի շուրջ, որը վարում էր ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը:

Հանդիպմանը ներկա էին՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Ռոբերտ Մակարյանը, Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Գեղամ Գևորգյանը, «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցի ներկայացուցիչներ: «Ինչպես գիտեք, ՀՀ կառավարությունը երեկ հաստատել է գյուղտեխնիկայի ձեռքբերման լիզինգի պետական աջակցության ծրագիրը, որի սուբսիդավորման համար այս տարի կուղղվի 120 մլն դրամ գումար, սակայն եթե պահանջարկը մեծ լինի, ապա կդիմենք գումարի չափն ավելացնելու համար: Մենք հետևողական ենք լինելու և պարբերաբար ուսումնասիրելու ենք ծրագրի արդյունավետությունը, գյուղտեխնիկա ներմուծողների և ֆինանսական կառույցների հետ համատեղ վերլուծելու ենք թույլ կողմերը՝ դրանք հետագայում շտկելու և վերջնական

սպառողին ներկայացնելու նպատակով», – նշել է նախարարը:

Նա ընդգծել է, որ գյուղտեխնիկայի արտադրման երկրի մասով որևէ սահմանափակում չի նախատեսվում: «Մենք ստեղծել ենք մի դաշտ, որտեղ բոլորը կարող են մասնակցել և առաջարկ անել: Ես համոզված եմ՝ արտահանող երկրների համար սա խթան է, և իրենք շատ արագ կստանան այդ ազդակը՝ Հայաստանում նման պետական ծրագրի առկայության մասին, և հենց արտադրողն է շահագրգռված լինելու ավելի լավ գին առաջարկելու՝ իր արտադրությունը զարգացնելու և նոր շուկա մտնելու համար: Սա իրականում նոր, ծավալուն շուկա է բոլոր գյուղտեխնիկա արտադրող երկրների համար», – հավելել է Իգնատի Առաքելյանը:

Իր հերթին նախարարի տեղակալ Ռոբերտ Մակարյանը հորդորել է հանդիպման մասնակիցներին առաջիկա օրերին արդեն սկսել բանակցությունները պայմանագրերի կնքման ուղղությամբ, որպեսզի սեղմ ժամկետներում սկսվի գյուղտեխնիկայի վաճառքի գործընթացը: Նա նաև հավելել է, որ ծրագրի շահառուներ կարող են դառնալ թե՛ մասնավոր հատվածի, թե՛ տեղական ինքնակառավարման մարմինների կառույցներ:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել ծրագրի իրագործմանը վերաբերող մի շարք հարցերի, այդ թվում՝ հնարավոր ռիսկերին, պայմանագրերի կնքման ընթացակարգին, ներկրվող տեխնիկայի հետերաշխիքային սպասարկմանը և այլն:

ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԱՄՇԱԿՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՄԱՐԵԼ ԵՆ 740.4 ՄԼՆ ԴՐԱՄ ՊԱՐՏՔ

2017 թվականի փետրվարի 8-ից մարտի 14-ն ընկած ժամանակահատվածում վերամշակող ընկերությունները 2015-2016 թվականներին գնված հումքի դիմաց գյուղացիական տնտեսություններին ունեցած ֆինանսական պարտավորություններից մարել են 740.4 մլն դրամ գումար, այդ թվում՝ 5 ընկերություններ ամբողջությամբ՝ վճարել են պարտքերը:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության առաջարկությամբ, գյուղացիական տնտեսությունների նկատմամբ ունեցած ֆինանսական պարտավորությունների կատարման ընթացքի վերահսկողության նպատակով, ընկերությունները կազմել են չկատարված պարտավորությունների մարման ժամանակացույց:

2017 թվականի փետրվարի 8-ի դրությամբ, 2015-2016 թվականներին գնված պտուղբանջարեղենի և խաղողի դիմաց չկատարված պարտավորություններ են ունեցել 22 վերամշակող ընկերություններ՝ 1486.5 մլն դրամ ընդհանուր գումարի չափով:

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԶԳՈՒՇԱՑՆՈՒՄ Է

Գյուղատնտեսական նախապատրաստական աշխատանքներին զուգահեռ, հանրապետության անտառային և հարակից տարածքներում մեծացել է հրդեհների առաջացման և տարածման վտանգը, ինչի մասին են վկայում նաև անտառային հրդեհների դեպքերը: Համայնքի սեփականությունն հանդիսացող ցանքատարածքները, բուսական մնացորդներից մաքրելու նպատակով, բնակչության կողմից կատարվում են հրկիզումներ, որոնք հաճախ տարածվում են անտառային տարածքներ՝ մեծ վնաս պատճառելով բնությանը և շրջակա միջավայրին:

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը հիշեցնում է, որ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի համաձայն՝ արգելվում է այրել խոզանները, բուսական մնացորդներով ու չորացած բուսականությամբ տարածքները, արոտավայրերի ու խոտհարքների բուսականությունը գյուղատնտեսական, անտառամերձ, անտառային ու բնության հատուկ պահպանվող տարածքներում: Հրդեհավտանգ

ժամանակաշրջանում, գյուղատնտեսական նշանակության հողերում հրդեհների կանխարգելման նպատակով, արգելվում է՝

- 1/կրակ վառել
- 2/վառվող լուցկի կամ ծխախոտի մնացորդ գցել
- 3/վուղերով, բենզինով և դյուրավառ այլ հեղուկներով ներծծված լաթեր թողնել:

Հրդեհավտանգ ժամանակաշրջանում գյուղատնտեսական աշխատանքներ իրականացնելիս հրդեհաշիջման նպատակով, պատրաստ վիճակում պետք է ունենալ հակահրդեհային սարքավորումներ ու սկզբնական հրդեհաշիջման միջոցներ (կրակմարիչներ, ջրով լի տարաներ, բահեր և այլն):

Գյուղատնտեսական հողերում ծագած հրդեհների դեպքում, որոնք կարող են ներթափանցել անտառային տարածք, հողօգտագործողները պետք է անմիջապես ահազանգեն ՀՀ ԱԻՆ տեղական ստորաբաժանումներին, ինչպես նաև սեփական ուժերով միջոցներ ձեռնարկեն հրդեհի մարման համար՝ մինչև համապատասխան օգնության ժամանելը:

ԿՈՈՊԵՐԱՅԻՄ

ԱՌԱՋՆԱՅԻՆԸ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽՆԴԻԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆ Է

«Արթին» չրերի արտադրություն գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվը ձևավորվել է 2009 թ.-ին՝ «Վորլդ Վիժն Հայաստան» միջազգային կազմակերպության աջակցությամբ: ՀՀ Արագածոտնի մարզի Արտենի համայնքի գյուղատնտեսական հողատարածքների զգալի մասը բաժին է ընկնում այգիներին, որոնցից ստացված բերքն իրացման խնդիր ունի: Զրերի արտադրության կոոպերատիվի կազմակերպմամբ լուծվեց իրացման խնդիրը:

«Այգետարածքների զգալի մասում աճեցվում է ծիրանի Սաթենի կոչվող սորտը, որն արտահանման համար նպատակահարմար չէ: Սակայն դրանից որակյալ, համային հատկանիշներով աչքի ընկնող չիր է ստացվում, որը կարելի է արտահանել, այսպես ստեղծվեց համատեղ չրարտադրության կազմակերպման և կոոպերատիվի ստեղծման գաղափարը», - պատմում է կոոպերատիվի անդամ Աղասի Ղազարյանը: Գյուղում առկա են ավելի քան 400 հա ծիրանի այգիներ, որոնցից ստացվում է քաղցրահամ բերք: «Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպությունն աջակցել է շենքի կառուցման աշխատանքներին (գյուղապետարանի ներդրումը կազմել է 30 տոկոս), տրամադրել է չորացման սարքավորումներ, սառնարաններ, որ-

տեղ միրգը պահպանվում է՝ մինչև մշակությունը: Զորացումն իրականացվում է ավանդական, քամհարման եղանակով, որի արդյունքում ստացվում է օրգանական չիր, ինչի պահանջարկը շատ մեծ



է արտերկրում: Աղասի Ղազարյանի տեղեկացմամբ, կոոպերատիվն այսօր նոր շուկաների հայտնաբերման խնդիր ունի: «Բարձրորակ արտադրանքն առայժմ սպառվում է ներքին շուկայում, սակայն արտահանման գործընթացի կազմակերպման դեպքում կոոպերատիվի անդամները պատրաստ են ընդլայնել այգետարածքները և ավելացնել տեսականին», - հավելում է պրն Ղազարյանը: Գյուղում բարձր բերք են

ապահովում նաև խնձորենիները, դեղձենիները և սալորենիները: Սև սալորի չիրը, օրինակ, պահանջարկ է վայելում արտերկրում, սակայն դեռևս չունեն մշտական կայուն շուկա:

Զրերն արտադրում են սանիտարա-հիգիենիկ պայմաններում, չորացվող միրգը չի շփվում արտաքին միջավայրի հետ և չի ենթարկվում այլ ազդեցությունների, քանի որ չորացման նպատակով միրգը տեղադրվում է ապակիների տակ և չորացվում փակ պայմաններում: «Արտադրանքի իրացման խնդիր կարգավորման դեպքում կոոպերատիվին անդամակցողների թիվը կտրուկ կավելանա», - նշում է Աղասին, ապա հավելում, որ կոոպերատիվի ստեղծումը հույժ կարևոր է՝ խնդիրների համատեղ բարձրացման, դրանց լուծման առումով: Կոոպերատիվի անդամներով միասին տնօրինում են 150 հա հողատարածք, որի մի մասն էլ բաժին է ընկնում բանջարանոցային մշակաբույսերին: «Արթին» կոոպերատիվի արտադրանքը

ներկայացվել է ցուցահանդեսներում, համոզմաների ընթացքում արժանացել է հավանության: Նոր շուկաներ ձեռք բերելու համար նմուշներ են ուղարկվել ԱՄՆ, Եվրոպա, ՌԴ և այլն, Աղասի Ղազարյանի տեղեկացմամբ, կոոպերատիվը պատրաստ է արտահանել նաև թարմ և սառեցված մրգատեսակներ: Պատրաստ են կազմակերպել նաև օրգանիկ հատապտուղների արտադրություն:

Ի դեպ, արտադրվող չրերը նույնպես օրգանիկ են, քանի որ տարածաշրջանը զերծ է բույսերի փսաստուծների և հիվանդությունների տարածումից, թունանյութեր, ինչպես նաև պարարտանյութներ չեն օգտագործվում: Օրգանիկ գյուղմթերքը միայն սերտիֆիկացման կարիք ունի, որի ձեռքբերումից հետո կկազմակերպեն նաև արտահանման գործընթացը: Զգալի է նաև էլեկտրական նոր չորանոցների պահանջարկը, քանի որ նախատեսվել են ընդլայնել արտադրությունը: Կոոպերատիվի առաջիկա ծրագրերից մեկը այգետարածքներում հակակարկտային ցանցերի տեղադրումն է: Աջակցության դեպքում նախատեսվել են հիմնել նաև մրգի վերամշակման արտադրամաս: Ծրագրերի իրականացման նպատակով առկա է նաև ցածր տոկոսադրույթներով վարկերի տրամադրման անհրաժեշտությունը, որի մի մասը կտրամադրվի մթերումների կազմակերպմանը և գյուղացիներին, մթերված մրգի դիմաց, կանխիկ վճարմանը:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆ

ՖԵՐՄԵՐՆԵՐՆ ՕՐԵՆՔՈՎ ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՆ

Օրերս Ագրոարդյունաբերական համակարգի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության (Ագրոարհմիություն) և Ջերմատնային ասոցիացիայի միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր, որով նախատեսվում է համակարգել ջերմոցային տնտեսություններում առկա խնդիրները, համատեղ մշակելով դրանց լուծման եղանակները:

Օրերս կայացավ երկու կազմակերպությունների անդրանիկ համատեղ նիստը: «Նախ և առաջ պետք է համատեղ վերհանվեն առկա խնդիրները, որոնք խոչնդոտում են ջերմոցային տնտեսությունների բնականոն աշխատանքներին: Խնդիրները կարող են վերաբերել հողի մշակությանը, արտադրանքի իրացմանը և այլն: Պետք է հստակեցնել, թե այս կամ այն խնդիրը ի՞նչ կազմակերպությունը պետք է բարձրացնի և որտեղ, որպեսզի լուծում գտնի», - ասում է Արհմիության նախագահ Հասմիկ Զհանգիրյանը: Նա նշեց, որ ջերմատնային տնտեսությունները միշտ էլ ունեցել են բազմաթիվ խնդիրներ, որոնք ներկայացվել են համա-



պատասխան գերատեսչությունների: Նշենք նաև, որ ոլորտի խնդիրները, ասոցիացիայի հետ համատեղ, վերջերս ներկայացվել են ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանին՝ աշխատանքային հանդիպման ընթացքում:

«Հաճելի է, երբ կառավարության ներկայացուցիչը պատրաստակամ վերաբերմունք է ցուցաբերում՝ ծագած խնդիրներին լուծումներ տալու համար», - հավելում է տիկին Զհանգիրյանը:

Անդրանիկ նիստը կայացավ ջերմատնային ասոցիացիայի անդամ

Էդուարդ Մուսոյանի ջերմոցային տնտեսությունում (ք. Երևան, Թբիլիսյան խճուղի), որտեղ ներդրված են նորագույն տեխնոլոգիաներ: Նիստին մասնակցում էին ասոցիացիայի գրեթե բոլոր անդամները, ովքեր ներկայացրեցին իրենց մտահոգող համապարփակ խնդիրները: Դրանք հիմնականում վերաբերում էին նոր տեխնոլոգիաների ներդրմանը, ցածր տոկոսադրույթով և երկարաժամկետ վարկերի տրամադրմանը, պետության կողմից սուբսիդիաների հատկացման անհրաժեշտությանը, բերքի իրացմանը, գազի կայուն մատակարարմանը և այլն:

«Պետք է անել հնարավորը, որպեսզի տեղական արտադրողն իրացման խնդիր չունենա: Իրացման գործընթացին հիմնականում խոչընդոտում են ներկրվող գյուղմթերքները՝ լոլիկ, վարունգ, տաքդեղ և այլն, որոնք բնականաբար, ավելի էժան են վաճառվում շուկայում և ցածր գնողունակություն ունեցող սպառողները, անկախ որակից՝

գնում են էժան գյուղմթերքները: Մինչդեռ տեղական արտադրողը չի կարող վաճառել էժան, քանի որ ի վերջո առկա են այնպիսի ծախսեր, որոնք պարտավոր են կատարել», - եզրահանգում է Հասմիկ Զհանգիրյանը: Նրա կարծիքով, ջերմոցային տնտեսություններում աշխատողները պետք է ստանան բավարար չափով աշխատավարձ, որպեսզի կարողանան հոգալ ընտանիքի հոգսերը: Այս առումով ևս կարևորվեց Ագրոարհմիության և Ջերմատնային ասոցիացիայի միջև համագործակցությունը:

«Հախուռն հարցերի լուծումը միշտ չէ, որ հանգում է արդյունավետության: Դրա համար պետք է առանձնացնել առաջնայինը և կարևորը, և հետամուտ լինել դրանց օրենսդրության սահմանում իրականացմանը», - հավելում է տիկին Զհանգիրյանը: «Ջերմոցային տնտեսություններ վարող ֆերմերներն այսօր օրենքով պաշտպանվածության կարիք ունեն», - նշեց Ջերմատնային ասոցիացիայի տնօրեն Պողոս Գևորգյանը:

Ի դեպ, Ագրոարհմիությունը առաջիկայում հանդես կգա «Գյուղատնտեսության մասին օրենքի» վերաբերյալ իր առաջարկների ծանրակշիռ փաթեթով:

ՈՒՍՈՒՅՈՒՄ

ՆՊԱՏԱԿԸ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄՆ ԷՐ

Մարտի 15-17-ը ՀՀ Կոտայքի մարզում կազմակերպվել էր ուսուցում՝ բուսաբուծության, անասնաբուծության, ագրոբիզնեսի կազմակերպման, տնտեսագիտության, պտղաբուծության վերաբերյալ: Նպատակը՝ մարզի մասնագետների գիտելիքների բարձրացմանը նպաստելն էր:

Սեմինարի կազմակերպման նախաձեռնությունը Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչությանն էր: Խորհրդատվական և ուսուցողական դասընթացների անցկացման համար մարզ էին հրավիրվել ՀԱԱՀ Ագրոբիզնեսի կազմակերպման ամբիոնի վարիչ, դո-

ցենտ, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու՝ Հայկ Ղազարյանը, Բուսաբանության ամբիոնի դոցենտ, գ.գ.թ. Ռադիկ Նազարյանը, Ծննդագիտության ամբիոնի դոցենտ, գ.գ.թ. Վրեժ Խոսեանյանը և Պտղաբուծության ամբիոնի դոցենտ, գ.գ.թ. Արա Հովհաննիսյանը:

Վրեժ Խոսեանյանը սեմինարի մասնակիցներին ներկայացրեց անասնաբուծության բնագավառում առկա խնդիրներն ու դրանց լուծման եղանակները: Նա առաջարկեց անասնաբուծության բնագավառում բարձրացնել արդյունավետությունը, փոխել կովերի արհեստական սերմնավորման կամ բնական ճանապարհով բեղմնավորման ժամանա-

կաշրջանը, ստեղծել կերի կայուն բազա, ժամանակին կանխարգելել վարակիչ հիվանդությունների տարածումը, այդ նպատակով ձեռք բերել համապատասխան բուժանյութեր, այդպիսով՝ կանխելով վտանգը: Ռադիկ Նազարյանն առաջարկեց մշակել սերմնաբուծության զարգացման ծրագիր՝ յուրաքանչյուր մշակաբույսի համար, զբաղվել փակ գրունտի պայմաններում բանջարեղենի արտադրությամբ: Միաժամանակ կարևորեց մարզում եգիպտացորենի մշակությունը կազմակերպելու գործընթացը՝ սիլոսի արտադրման համար: Հայկ Ղազարյանը ներկայացրեց տնտեսավարման ձևե-

րի ժամանակակից ուղիները, իսկ Արա Հովհաննիսյանն առաջարկեց զբաղվել ինտենսիվ այգիների մշակությամբ:

«Առաջարկվեց նաև ստեղծել կոոպերատիվներ՝ հողերն առավել արդյունավետ օգտագործելու և դրանց մշակությունն առավել շահույթաբեր դարձնելու համար: Կարևորվեց նորագույն տեխնոլոգիաների կիրառումը գյուղատնտեսության յուրաքանչյուր բնագավառում, որը խիստ անհրաժեշտ է», - ասաց Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Միքե Եղիազարյանը: Նա կարևորեց նաև մարզի համայնքներում այսպիսի ուսուցումների հաճախակի կազմակերպումը:

ՏԵՍԱԿԵՏ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՆ
ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Խմբային աշխատանքը ՀԱԱՀ Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնում կարևորվող դասավանդման մեթոդներից մեկն է: «Գյուղատնտեսական կոոպերատիվներ» առարկայի շրջանակում հանձնարարվող խմբային աշխատանքը լրացուցիչ իմաստ ու «համուհուտ» է ձեռք բերում այն առումով, որ մեզանից պահանջվում է ուղղակիորեն աշխատել Հայաստանի տարբեր մարզերում գործող կոոպերատիվների հետ: Իսկ հաշվի առնելով այն հանգամանքը, որ առարկան դասավանդում է գյուղատնտեսական կոոպերատիվների գծով երկրում հայտնի փորձագետ, ԱՀԿԿԿ (ICARE) հիմնադրամի տնօրեն

Ամսաթիվ	Տեղանք	Մասնակցություն	Ժամանակ
1	1	2	3
2	4	5	6
3	7	8	9
4	10	11	12
5	13	14	15
6	16	17	18
7	19	20	21
8	22	23	24
9	25	26	27
10	28	29	30
11	31	32	33
12	34	35	36

Վարդան Ուռուտյանը՝ մեր խնդիրն ավելի բարդ ու ավելի հետաքրքիր է դառնում:

Հինգ հոգուց բաղկացած մեր խումբը «պատասխանատու» էր Արարատի մարզի Արալեզ համայնքում գործող համանուն կոոպերատիվի համար: Սպառողական այս կոոպերատիվը հիմնադրվել է 2004 թ.-ին, այսօր ունի 57 անդամ, 100 հեկտար վարելահող, որը կազմում է համայնքի վարելահողերի ընդհանուր պաշարի մեկ հինգերորդ մասը: «Արալեզի» անդամները գլխավորապես զբաղվում են պտղի և խաղողի արտադրությամբ: Կոոպերատիվի անդամները հիշում են այն ժամանակները, երբ իրենք պատկերացում անգամ չունեին, թե ինչ բան է կոոպերատիվը և որն է դրա օգուտը:

«Ժամանակի ընթացքում մենք գիտակցեցինք, որ կոոպերատիվը մեր արտադրական ծավալներն ընդլայնելու և եկամուտներն ավելացնելու շատ իրական հնարավորություն է», - ասում են ֆերմերները:

Կոոպերատիվների մասին գիտելիքներ յուրացնելու իմ ոչ մեծ փորձն ինձ համոզել է առնվազն երկու հարցում.

ա) Հայաստանում գյուղատնտեսական արտադրությունը կազմակերպելու, գյուղատնտեսության ընդհանուր զարգացման, այս ոլորտն առևտրայնացնելու առումով կոոպերատիվ կառուցվածքը շատ քիչ այլընտրանք ունի, եթե առհասարակ ունի.

բ) գործունեության մեկնարկային փուլում կոոպերատիվներին անհրաժեշտ է ցուցաբերել լրացուցիչ ֆինանսական աջակցություն՝ ի լրացում պետության կողմից տրամադրվող սուբսիդիաների, որոնք խիստ կարևոր են, բայց ոչ բավարար: «Արալեզ» կոոպերատիվին, այս առումով, կարելի է ասել «երես չեն տվել», ուստի կոոպերատիվի անդամները խիստ կարևորում են Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն (ՔԱՐԴ)

հիմնադրամի կողմից տրամադրվող աջակցությունը, որի շնորհիվ կազմակերպությունը շարունակում է «ողջ և առողջ» մնալ: Ներկայումս ՔԱՐԴ-ը կոոպերատիվի անդամներին առաջարկում է մատչելի փոքր վարկեր՝ 300.000-ից մինչև 1 մլն դրամի սահմաններում, ինչպես նաև՝ նպատակային տեխնիկական-մասնագիտական աջակցություն, որը թույլ է տալիս ֆերմերներին ավելի վստահ լինել արտադրության ու վաճառքի կազմակերպման հարցերում:

«Արալեզի» գործունեության մեջ կա ևս մի կարևոր հանգամանք: Նախ, անկախ այն նրանից, թե կոոպերատիվի որ անդամն ինչ ներդրում է ունեցել կոոպերատիվին անդամագրվելու պահին, գործում է «մեկ անդամ՝ մեկ ձայն» սկզբունքը: Այսպիսով՝ կոոպերատիվի անդամները և նրանց ընտանիքները քաջատեղյակ են և փորձառու՝ որոշումների ընդունման ժողովրդավարական ընթացակարգի հարցում: Սա կոոպերատիվների համընդհանուր կարևոր սկզբունքներից մեկն է:

Հավանության է արժանի կոոպերատիվի կողմից անդամներին և ոչ անդամներին մատուցվող ծառայությունների և խորհրդատվության գնացուցակը: Հաճելի էր տեսնել կոոպերատիվների այս սկզբունքը գործողության մեջ. տեսանելի տեղում փակցված գնացուցակում ներառված ներդրանքների և ծառայությունների գների տարբերությունն անդամների և ոչ անդամների համար ցույց է տալիս կոոպերատիվի անդամ լինելու ակնհայտ առավելությունը:

Հիմնական խնդիրը, մեր խմբի կարծիքով, վստահության և համախմբվածության պակասն էր կոոպերատիվի որոշ անդամների և կոոպերատիվի դիտորդ խորհրդի միջև: Դասընթացներից հիշում ենք, որ մեր դասախոս Վ. Ուռուտյանը կոոպերատիվ գործունեության մեջ փոխադարձ վստահությունը դնում է առաջին տեղում:

Անշուշտ, մարդիկ կարող են ունենալ տարբեր կարծիքներ ու մտածելակերպ, սակայն եթե դու կոոպերատիվ ես մտել, ճիշտ կլինի, որ հասկանաս, թե որոնք են ընդհանուր նպատակները և լինել մեծամասնության ու խորհրդի համախոհը: Մյուս կողմից, կարծում եմ, կոոպերատիվի նախագահը կարող էր ավելի մեծ արդյունքի հասնել կոոպերատիվի յուրաքանչյուր անդամի հետ անհատական աշխատանքում, եթե հնարավորություն ունեցած լինեք, ինչպես մենք, Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնում անցնել հոետորական արվեստի և համոզիչ խոսքի դասերը, որոնք կարևոր են անդամների հետ տարվող աշխատանքներում:

Առաջարկում ենք նաև ամրապնդել, ավելի ճիշտ՝ սկսել համագործակցություն ենթամարզում գործող այլ կոոպերատիվների հետ: Մասնավոր խաղողի վաճառքի գործում համախմբելով ջանքերը՝ գինեգործների հետ սակարկությունների ժամանակ կոոպերատիվներն ավելի մրցունակ գին կարող են թելադրել:

Մեր հիմնական առաջարկությունները մեկն էլ պահուստային ֆոնդի ստեղծումն է, որը թույլ կտա մեղմել ներդրանքների կամ սարքավորումների գնման կամ վարձակալման ժամանակ առաջացող անխուսափելի լարվածությունը:

Նարեկ Խաչատրյան
ՀԱԱՀ Ագրոբիզնեսի ուսուցման
կենտրոնի
բակալավրիատի ավագ կուրս

ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

ԳԻՆՈՒ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ
ՇՈՒՏՈՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԼԻՆԵՆ

Սրբեղծել գինեգործական կրթության համար նյութապրեխնիկական բազա, մեկ միասնական համակարգի մեջ միավորել համալսարանին պարկանող տարբեր ստորա-բաժանումների գիտական և նյութական ռեսուրսները՝ ապահովելով ՀՀ-ում մեծ պահանջարկ ունեցող «Խմորման արտադրությունների տեխնոլոգիա և գինեգործություն» մասնագիտությամբ բարձր որակավորում ունեցող շրջանավարտների մուտքը արտադրություն և գիտաարտադրական ոլորտում նորարարությունների խթանումը:

Սա նպատակ էր, որ որդեգրեցին Ագրարային համալսարանի աշխատակիցները դեռևս երկու տարի առաջ, երբ մեկնարկեց «Գինեգործական կրթության գիտաարտադրական բաղադրիչի զարգացում» ծրագիրը: Կատարված նպատակաուղղված աշխատանքների արդյունքում, այն արդեն գրեթե վերջնական փուլում է:

Օրերս Ագրարային համալսարանի ռեկտոր Ա. Թարվերդյանի և վրաստանյան Գ.Բ.Քոնսալյեինգ ՍՊԸ-ի տնօրեն Գեորգի Բեթսիաշվիլու միջև կնքվեց Համաշխարհային բանկի կողմից հաստատված մատակարարման պայմանագիր, համաձայն որի՝ համալսարանի Ոսկեհատ ուսումնափորձնական տնտեսությունում կառուցվող գինեգործարանում կտեղադրվեն իտալական գինեգործական բրենդային սարքավորումներ:

Ըստ պայմանավորվածության սարքավորումների մատակարարումը կիրականացվի մինչև հուլիս: Գինու գործարանի ստեղծմամբ, հնարավորություն կտրվի ապագա գինեգործներին ոչ միայն լիարժեք մասնագիտական գործնական գիտելիքներ ձեռք բերել, այլ նաև կատարել հետազոտություններ, ինչու ոչ, հեղինակ դառնալ նորարարությունների, գյուտերի: Այս կարծիքին է նաև Քոնսալյեինգ ՍՊԸ-ի տնօրենը, ով համալսարանի այցի ժամանակ նշեց, թե որքան նպաստավոր կարող է լինել ծրագրի իրականացումը. «Գինու գործարանի ստեղծումը հրաշալի հնարավորություն կարող է լինել ինչպես հայ, այնպես էլ տարածաշրջանի մյուս գինեգործների համար՝ ունենալու կայուն ձեռքբերումներ գինեգործության ոլորտում»:

Ծրագրի իրականացումն ի սկզբանե հղի էր հաջողություններ ունենալու հնարավորությամբ, քանի որ ՀԱԱՀ-ը՝ միավորելով խաղողագիտական գինեգործության և Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի երկու գիտական կենտրոնների, Բալախովիտի և Ոսկեհատի ուսումնափորձնական տնտեսությունների գիտաշխատողների ներուժը և հումքային բազան, ծրագրի շրջանակներում հնարավորություն կունենա պատրաստել մրցունակ կադրեր, իրականացնել նորամուծական գիտական ծրագրեր, կրթական ծառայություններ մատուցել ոլորտի փոքր և միջին ձեռնարկությունների և այլ հաստատությունների համար:

2017թ. ավարտին, ինչպես նախատեսված է, Ագրարային համալսարանում կտոնվի նոր կառույցի բացումը:

www.anau.am

ՍԵՐՄՆԱՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵՐՄԵՐԸ ԵՎ ՍԱԾԻԼՆԵՐԸ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ

Բանջարաբուսության և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնում սկսվել են տարբեր մշակաբույսերի՝ լոլիկի, վարունգի, սմբուկի, քաղցր և կծու պղպեղի, լոբու, բրոկոլիի և այլ տեղական սորտերի սերմերի ցանքի աշխատանքները:



Անցնող տարվա ընթացքում, գիտական կենտրոնը համալրել է իր տեխնիկական միջոցները նոր, ժամանակակից, բարձրակարգ սարքավորումներով, որոնց շնորհիվ գիտական կենտրոնում արտադրվող սերմերն անցնում են ավտոմատացված մշակման փուլեր, ինչի շնորհիվ բարձրանում է սերմերի որակական հատկանիշները: Նորագույն սարքավորումների շնորհիվ սերմերն անցնում են վազման, չորացման, փայլեցման, ախտահանման և փաթեթավորման փուլեր, արդյունքում փաթեթներում բացառվում է անորակ սերմերի առկայությունը: Գիտական կենտրոնը համալրվել է նաև սածիլների աճեցման համար հատուկ տեխնիկական միջոցներով: Բարձրակարգ մշակում անցած սերմերը ցանվում են հատուկ նախատեսված խոռոչիկներում, որից հետո տեղադրվում են սերմերի աճեցման համար նախատեսված հատուկ ջերմային խցիկում, որտեղ ապահովվում է սերմերի աճին համապատասխան օդի ջերմաստիճանը, օդի հարաբերական խոնավությունը և լուսավորությունը: Սերմերը ծլելուց հետո տեղափոխվում են հատուկ սենյակ, որը ապահովված է սածիլի աճի տվյալ փուլին համապատասխան ջերմաստիճանով և լուսավորությամբ: Այս փուլերն անցնելուց հետո սածիլը տեղափոխվում է հատուկ հողախառնուրդով պատրաստված տարաների մեջ, որի արդյունքում ստացվում են բարձրորակ թաղարային սածիլներ: Այդ սածիլները կարելի է մշակել ինչպես բաց դաշտի, այնպես էլ ծածկած գրունտի մշակության համար:

Ներկա պահին գիտական կենտրոնում կատարվում են վերոնշյալ աշխատանքները. նախապատրաստվում են առաջարկել մեծաքանակ բարձրորակ սածիլներ:

ԲԲՏՄ Գ/Կ

ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

«ԱՊԱԳԱՆ ՄԵՐՆ Է»

Արմինե Մուրադյանը բնակվում է Լոռու մարզի Գարգառ գյուղում, որն ունի շուրջ 1000 բնակիչ: Արմինեն ապրում է ամուսնու, երկու որդիների, հարսի և թոռնիկի հետ: Կրթությունը որդին ներկայումս ծառայում է հայկական բանակում:



«Մեր համայնքում մարդիկ հիմնականում զբաղվում են անասնապահությամբ և բերքամշակմամբ: Գյուղի բնակիչների մի մասն աշխատում է գյուղապետարանում, դպրոցում և հարևան գյուղի գործարանում», - ասում է Արմինեն: Համայնքում խոտհունձն ու հակեր պատրաստելը սովորաբար համարվում է տղամարդկանց աշխատանք, իսկ անասնապահությամբ և այգեգործությամբ հավասար կերպով զբաղվում են թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ, հաճախ՝ նաև երիտասարդները: Չնայած համայնքում առկա նման գենդերային ընկալումներին՝ Արմինեն, գյուղից մի քանի կին ֆերմերների հետ միասին, ձևավորել է բարձրարժեք բանջարեղենի արտադրության կոոպերատիվ, որը կոչում են «Ապագան մերն է»: Կանայք փորձում են աճեցնել այնպիսի մշակաբույսեր, որոնք տարածված չեն տեղական շուկայում:

Ամեն ինչ սկսվեց հինգ տարի առաջ, երբ Արմինեի նախաձեռնությամբ և առաջնորդությամբ, գյուղի մի քանի կանայք որոշեցին աճեցնել ոչ ավանդական բանջարեղեն՝ ծնեբեկ, ռուկոլա, բրոկկոլի, որոնք բարձր գին և մեծ պահանջարկ ունեն տեղական շուկայում: Սկիզբն այնքան էլ հեշտ չէր, բայց հետագա փորձը ցույց տվեց, որ ջանքերն ապարդյուն չէին եղել: Կանայք ինքնազբաղվածության հնարավորություն և եկամտի լրացուցիչ փոքր աղբյուր ստեղծեցին իրենց համար, աստիճանաբար գրավեցին տարբեր ՀՎ-ների և իրենց փորձով հետաքրքրվող այլ ֆերմերների ուշադրությունը:

Արմինեն նշում է, որ իրենց համար ամենամեծ մարտահրավերներից մեկը ջերմոց ձեռք բերելն է, որտեղ մշակաբույսերի սածիլները նախապես աճեցնելու հնարավորություն կունենային, որից հետո դրանք կտեղափոխվեին բաց դաշտ՝ ընդլայնված մշակություն կազմակերպելու համար: Զերմոցի առկայությունը խիստ կարևոր էր նրանց համար՝ հաշվի առնելով Լոռվա մարզի անձրևոտ և համեմատաբար ցուրտ կլիման:

2015 թվականին Արմինեի խումբը դիմել է Հայաստանում Եվրոպական հարևանության գյուղատնտեսության և գյուղի զարգացման ծրագրի (ENPARD)

«Արտադրող խմբերի և արժեշրջանների զարգացում» բաղադրիչի բաց մրցույթին և դժվարին մրցույթային փուլն անցնելուց հետո, ի վերջո, ներգրավվել են ծրագրում՝ որպես շահառուներ: Ծրագիրը, որն իրականացվում է ՄԱԶԾ (UNDP) և ՄԱԱԶԿ (UNIDO) Հայաստանյան գրա-

սենյակների կողմից և ֆինանսավորվում է Եվրոպական Միության և Ավստրիական զարգացման գործակալության կողմից, ներկայումս երկրում իրականացվող լայնածավալ գյուղատնտեսական ծրագրերից մեկն է: Արմինեն և իր գործընկեր ֆերմերները կոոպերատիվի հիմնադրման, գործարար հմտությունների զարգացման վերաբերյալ դասընթացներ են անցել և մասնագետների աջակցությամբ մշակել իրենց բիզնես ծրագիրը: «Նման ծրագրերն ընդլայնում են կանանց դերը ընտանիքում և հասարակությունում՝ նրանց դարձնելով ավելի ուժեղ և ինքնավստահ», - նշում է Արմինեն: Ծրագրի աջակցությամբ 2016 թ. հունիսին կին ֆերմերներն արդեն իսկ բրոկկոլիի սերմեր էին ցանում՝ իրենց սեփական թունելային ջերմոցում, որն ապահովված էր նաև կաթիլային ոռոգման համակարգով: Հարյուրավոր պլաստիկ տարաներում աճող սածիլները հետագայում տեղափոխվեցին և վերատնկվեցին մոտակա դաշտում, որպեսզի բույսերն աճեն և բերք տան: Ամառվա վերջին Արմինեն արդեն ուրախությամբ իր աճեցրած բերքն էր հավաքում. նա համբերատար է և չի արագացնում իրադարձությունների ընթացքը. «Երբ մենք շուկա ունենանք, պետք է կարողանանք գնորդների համար ապահովել բրոկկոլիի բավարար քանակն ու համապատասխան պահանջները»: Թերևս Արմինեի ընտանիքի երիտասարդ ներկայացուցիչները չեն զբաղվում գյուղատնտեսությամբ, սակայն ամուսինը մեծ աջակցություն է ցուցաբերում բերքահավաքի և բերքի վաճառքի հարցում:

Դանդաղ, բայց հաստատուն քայլերով, Արմինեն և իր թիմը պատրաստվում են զուգահեռաբար մշակել այլ արտադրանքներ իրենց բիզնեսի համար, օրինակ՝ բրոկկոլիից արտադրել մանկական կեր կամ աճեցնել այլ մշակաբույսեր:

Այս նախաձեռնող, իրենց ուժերի վրա վստահ և աշխատասեր կանայք ունեն հաջողության հասնելու համար բոլոր նախադրյալները, քանի որ համբերատարությամբ և նվիրվածությամբ հետևել են, որպեսզի իրենց աշխատանքի «սածիլներն» աճեն:

www.womenet.am

ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ՄԿՄՎԵԼ ԵՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Հանրապետությունում բուսասանիտարական վիճակի ճշման, բույսերին առավել վնաս պատճառող վնասատուների և հիվանդությունների զարգացումն ու տարածման արեալները ճշգրտելու նպատակով, «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից յուրաքանչյուր տարի ՀՀ մարզերում 251400 հա-ի վրա իրականացվում են մշտադիտարկման աշխատանքներ:



Մշտադիտարկման հիմնական օբյեկտներն են՝ մկնանման կրծողները, մորեխները, բազմամյա տնկարկների հիմնական վնասատուներն ու հիվանդությունները (վիճներ, տզեր, վահանակիրներ, պտղակերներ, տերևակերներ, քոս, ծակոտկեն



բժավորություն, գանգրոտություն, մոնիլիոզ, միլդիու, օիդիու, ողկուզակեր, ոստայնատիզ), բանջարաբուստանային մշակաբույսերին վնաս պատճառող օրգանիզմները (վիճներ, տզեր, կեղծ ու իսկական այրացող, թառամումներ) և հացահատիկային մշակաբույսերի ժանգերը, քարամրիկը, փոշեմրիկը, գաճաճային մրիկը: «Սակայն, հաշվի առնելով վնասակարության աստիճանը, կատարվելիք մշտադիտարկման ողջ ծավալի մեծ մասը բաժին է հասնում մկնանման կրծողներին և մորեխներին», - տեղեկացնում է Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոնի բուսասանիտարիայի բաժնի պետ Գևորգ Հարությունյանը:

Մշտադիտարկման ժամկետներն ընտրվում են՝ հաշվի առնելով յուրաքանչյուր վնասակար օրգանիզմի կենսակերպը, բազմացման առանձնահատկությունները և մշտադիտարկման անցկացման վայրի աշխարհագրական դիրքն ու բնակլիմայական պայմանները:

Մասնավորապես, մկնանման կրծողների մշտադիտարկումը տարվա ընթացքում, իրականացվում է 2 անգամ, ցածրադիր գոտում՝ փետրվար և հոկտեմբեր, իսկ բարձրադիր գոտում՝ մարտ և սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին: Իսկ ապրիլ և նոյեմբեր ամիսներին իրականացվում է կատարված պայքարի արդյունավետության մշտադիտարկում:

«Կատարված մշտադիտարկման արդյունքների հիման վրա՝ վարակվածության միջին և բարձր ցուցանիշ ունեցող համայնքներին, ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից անհատույց տրամադրվում է անհրաժեշտ քանակությամբ կնասպան թունանյութ՝ պայքար կազմակերպելու նպատակով», - տեղեկացնում է Գևորգ Հարությունյանը:

Հաշվի առնելով մկնասպան թունաքիմիկատների խիստ թունոնակ լինելը՝ պայքարի աշխատանքներն անվտանգ և արդյունավետ կազմակերպելու նպատակով, ՊՈԱԿ-ի մարզային ագրոնոմները համայնքներում իրականացնում են բացատրական աշխատանքներ՝ թունավորված գրավչանյութի պատրաստման և պայքարի կազմակերպման ուղղությամբ:

«Պայքարն արդյունավետ և անվտանգ կազմակերպելու գործում մեծ է նաև համայնքների ղեկավարների դերը: Աշխատանքները սկսելուց առաջ համայնքի ղեկավարը պետք է իրազեկի բնակչությանը պայքարի միջոցառումների իրականացման վայրի և ժամկետների մասին, աջակցի գրավչանյութի պատրաստմանը և տրամադրմանը հողօգտագործողներին», - հավելում է Գ. Հարությունյանը:



Նեկի Սահակյան

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԱՆԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Լինելով երկրի տնտեսական բարգավաճման և ազգային անվտանգության հետ ուղակիորեն առնչվող մի ոլորտ անասնաբուժական ծառայությունը հետապնդում է երեք հիմնախնդիրների լուծում՝

ա. Գյուղատնտեսական և ընտանի կենդանիների, թռչունների, օգտակար միջատների հիվանդությունների կանխարգելում և բուժում:

բ. Կենդանական ծագման մթերքի ու հումքի արտադրության խթանում, արտադրանքի քանակական ու որակական հասկանիչների բարձրացում՝ բնակչությանը անհրաժեշտ սննդային սպիտակուցներով ու ճարպերով ապահովելու նպատակով:

գ. Մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդություններից հասարակության պաշտպանությանը ուղղված միջոցառումների կազմակերպում:

Նման կարևորագույն խնդիրներ իրականացնելու նպատակով, անասնաբուժական ծառայությունը պետք է լինի պետության ձեռքերում, որը կազմակերպում և ղեկավարում է անասնաբուժական ծառայությունը երկրում, ապահովում է այդ ծառայության նյութատեխնիկական բազան:

Մեր երկրում պետական անասնաբուժական ծառայությունը ղեկավարվում է սննդի անվտանգության ու անասնաբուժական ծառայության կողմից, որն իր գործունեությունը տեղերում իրականացնում է մարզային անասնաբուժական տեսչությունների ու տարածաշրջանային ՊՈԱԿ – ների միջոցով: Առնչվելով կազմակերպչական և ֆինանսական բնույթի դժվարությունների հետ՝ մեր երկրի անասնաբուժական ծառայությունը ժառանգել է խորհրդային տարիներից լավագույն ռազմավարություններից մեկը, այն է՝ հատուկ վտանգավոր վարակիչ հիվանդությունների կանխարգելման պլանային սկզբունքը: Ի տարբերություն հարևան Վրաստանից, որտեղ պետական մակարդակով չեն իրականացվում մշտական հակահամաճարակային միջոցառումներ՝ մեր հանրապետությունում թեկուզ և ներկայիս սուղ տնտեսական պայմաններում պետությունը ստանձնել է մի շարք վտանգավոր վարակիչ հիվանդությունների կանխարգելումը:

Սննդի անվտանգության ու անասնաբուժական ծառայությունը Հայաստանի բոլոր տարածաշրջանների համար հաստատում է տարեկան կանխարգելիչ հակահամաճարակային միջոցառումների պլանը, այսպես կոչված, պետպատվեր առաջադրանքը, որը կազմվում է՝ ելնելով տարածաշրջանի կենդանիների գլխաքանակի տվյալներից ու համաճարակային իրավիճակից: Պլանային միջոցառումները ֆինանսավորվում են պետ բյուջեից և իրականացվում պետական անասնաբուժական ծառայության համայնքային անասնաբույժների կողմից: Պետական անասնաբուժական ծառայությունը պլանային միջոցառումների համար անվճար հիմունքներով անհրաժեշտ կենսապատրաստուկներ է տրամադրում նաև տարածաշրջաններում գտնվող մեծ անասնապահական տնտեսություններն ու համալիրները սպասարկող մասնագետներին:

Ներկայիս պետպատվեր առաջադրանքն ընդգրկում է ախտորոշիչ հետա-

զոտություններ՝ քրոնիկ ընթացքով և կանխարգելիչ պատվաստումներ սուր ընթացքով՝ առավել վտանգավոր վարակիչ հիվանդությունների դեմ:

Ախտորոշիչ հետազոտություններն իրականացվում են տուբերկուլյոզ և բրուցելյոզ հիվանդությունների նկատմամբ, որոնք չունեն ցայտուն կլինիկական նշաններ և որոնց դեմ առայժմ չեն կիրառվում արդյունավետ պատվաստանյութեր:

Տուբերկուլյոզը գյուղատնտեսական կենդանիների ու թռչունների քրոնիկ ընթացքով ինֆեկցիոն հիվանդություն է, որը բնութագրվում է հիվանդ կենդանու տարբեր հյուսվածքներում ու օրգաններում լուսանման պարունակյալով՝ հանգուցների առաջացումով: Հիվանդ կենդանիների մոտ հիվանդությունն արտահայտվում է վարակվելուց ամիսներ անց հյուծվածությամբ և մակերեսային ավշային հանգուցների մեծացումով: Մարդը կարող է վարակվել տուբերկուլյոզով՝ ինչպես անմիջապես հիվանդ կենդանուց, այնպես էլ՝ հիվանդ կենդանուց ստացած մսից ու կաթնամթերքից: Տուբերկուլյոզով հիվանդ կենդանիներին հայտնաբերում են ալերգիական եղանակով, որը կոչվում է տուբերկուլինիզացիա: Կենդանիներին ներարկում են տուբերկուլյոզի հարուցիչ սպիտակուցներ պարունակող կախուկ-տուբերկուլին, որի նկատմամբ հիվանդ կենդանիները հակազդում են տեղային բորբեքային պրոցեսով, որն առաջանում է տուբերկուլինի ներարկման հատվածում: Խոշոր եղջերավոր կենդանիների տուբերկուլինիզացիան կատարում են տարին երկու անգամ՝ գարնանը և աշնանը: Տուբերկուլինի նկատմամբ դրական հակազդող կենդանիները ենթակա են հարկադիր սպանդի:

Բրուցելյոզը խոշոր և մանր եղջերավոր կենդանիների քրոնիկ ընթացքով ինֆեկցիոն հիվանդություն է, որը հիմնականում հղի կենդանիների մոտ արտահայտվում է վիժումներով հղիության երկրորդ փուլում: Բրուցելյոզով հաճախ վարակվում են անասնապահության բնագավառի աշխատողները՝ անասնապահները, հովիվները, անասնաբույժները հիվանդ կենդանիներից ծին ընդունելիս: Մարդկանց բրուցելյոզի պատճառ է լինում հիվանդ կենդանիներից ստացված թարմ կաթ ու կաթնամթերք օգտագործելիս: Բրուցելյոզն ախտորոշում են շիճուկաբանական եղանակով, որի համար անհրաժեշտ է

կազմակերպել արյունառություն: Արյունը լծային կամ պոչի երակից վերցնում են փորձանոթների մեջ և հասցնում լաբորատորիա արյան շիճուկում հակաբրուցելյոզային հակամարմիններ հայտնաբերելու նպատակով: Նման հակամարմիններ ունեցող կենդանիներն համարվում են հիվանդ և ենթակա են հարկադիր սպանդի: Ախտորոշիչ արյունառությունը կատարում են տարին երկու անգամ՝ գարնանը և աշնանը, հատուկ ուշադրություն դարձնելով մանր եղջերավոր կենդանիների վարակվածությանը, նկատի ունենալով, որ այդ կենդանական տեսակից մարդկանց փոխանցվող բրուցելյոզի հարուցիչը առաջացնում է հիվանդության առավել ծանր տեսակը:



Կանխարգելիչ պատվաստումները կազմակերպում են սուր ընթացք ունեցող, արագ տարածվող ինֆեկցիոն հիվանդությունների նկատմամբ՝ սիբիրախտ, դաբաղ, խոշոր եղջերավոր կենդանիների խշխշան պալար, խոզերի դասական ժանտախտ, թռչնագրիպ:

Կենդանիներին կանխարգելիչ պատվաստումների, կամ վակցինացիայի ենթարկում են տվյալ տարածաշրջանում առավել տարածված ինֆեկցիոն հիվանդությունների նկատմամբ: Անկախ տեղանքի առկա համաճարակային վիճակից՝ պետպատվեր առաջադրանքը ընդգրկում է կանխարգելիչ պատվաստումներ հողային ինֆեկցիաների դեմ՝ սիբիրախտ, խոշոր եղջերավոր կենդանիների (խեկ) խշխշան պալար, իսկ սահմանամերձ տարածքներում նաև դաբաղ վիրուսային հիվանդության դեմ:

Սիբիրախտն ու խոշոր եղջերավոր կենդանիների խշխշան պալարը համարվում են հողային ինֆեկցիաներ, որոնց հարուցիչը սպորների ձևով տարիներով պահպանվում է հողում, պայմանավորելով տվյալ տարածքի երկարատև անապահովությունը այդ հիվանդությունների նկատմամբ, ուստի այս հիվանդություններով կենդանիները առավել հաճախ վարակվում են արոտային շրջանում: Սիբիրախտը բնութագրվում է սրնթաց ընթացքով, խոցավորված այտուցների (կարբունկուլների) առաջացումով և խիստ վտանգավոր է մարդու համար, որը հիմնականում հիվանդանում է սիբիրախտից ընկած կամ հիվանդ կենդանու մսեղիքից: Այս վարակի դեմ գյուղատնտեսական կենդա-

նիների մատղաշին պատվաստում են 3 ամսական, այնուհետև կրկին՝ 6 ամսական հասակում, իսկ հասուն խոշոր եղջերավոր կենդանիներին՝ տարին 2 անգամ՝ գարնանը և աշնանը: Այլ տեսակի կենդանիներին պատվաստում են տարին մեկ անգամ: Խոզերին՝ գարնանը, իսկ ոչխարներին ու ձիերին աշնանը:

Խշխշան պալարի նկատմամբ մեր հանրապետության տարածքում խոշոր եղջերավոր կենդանիները զգայուն են 3 ամսականից մինչև 4 տարեկան հասակը: Հիվանդությունը բնութագրվում է վարակված կենդանու մկաններում գազային գանգրենայի՝ խշխշացող այտուցների առաջացումով, սրնթաց ընթացքով և բուժման ցածր արդյունավետությամբ: Նշված հասակային խմբի

տավարին խշխշան պալարի դեմ հարկ է պատվաստել գարնանը՝ արոտավայր քշելուց երկու շաբաթ առաջ. այդ ընթացքում առաջանում է հետպատվաստային վարակամերժում:

Դաբաղը կոհակավոր կենդանիների՝ խոշոր և մանր եղջերավոր կենդանիների ու խոզերի խիստ վարակիչ վիրուսային հիվանդություն է, որին բնորոշ են մաշկի ու լորձաթաղանթների բշտկային (աֆտոզային) ախտահարումներ և կաթնատվության կտրուկ նվազումը՝ 70–75 %-ով: Դաբաղի դեմ կենդանիների պատվաստումները կազմակերպում են հատկապես սահմանամերձ տարածքներում, ուր հարուցիչը հաճախ թափանցում է հարևան երկիրներից՝ նույնիսկ քամու միջոցով՝ պայմանավորելով ոչ միայն առանձին համայնքների, այլև տարածաշրջանների անապահովությունը: Դաբաղի վիրուսին բնորոշ է բազմազանություն, այդ պատճառով պատվաստումներից առաջ անհրաժեշտ է որոշել հարուցիչի տիպը, ընտրելով համապատասխան պատվաստանյութ: Կենդանիներին պատվաստում են՝ սկսած 4 – 6 ամսական հասակից՝ տարին երկու անգամ:

Ինֆեկցիոն հիվանդությունների բռնկման դեպքում պետական անասնաբուժական ծառայությունը տեղային ինքնակառավարման մարմինների աջակցությամբ կազմակերպում է հարկադիր բնույթի առողջացնող միջոցառումներ, որոնք ֆինանսավորվում են պետական բյուջեից:

Արթուր Մկրտչյան

ՀԱԱՀ, անասնաբուժական գիտությունների թեկնածու

ՀԵՏԱԲՈՒԹՅՈՒՆ...

ՆԵԽՈՒՐ (ՔԱՐԱՎՈՒԶ)

Հին հույները նեխուրը (քարավուզ) անվանում էին «լուսնային բույս», քոսների ժամանակ դրանով իսկ զարդարում էին տները:

Միջերկրական ծովափի երկրներից եկած այս բույսը հնում միատիպական հատկությամբ



յուններով օժտված են համարել, որը երիտասարդություն և կիրք է պարգևում: Հին Հռոմում նեխուրը նաև դեկորատիվ բույս էր համարվում: Ըստ ավանդության՝ Տրիստանի և Իզոլդայի խմած սիրո թուրմի մեջ նաև նեխուրի հյութ կար: Քարավուզը սննդի մեջ առաջինը գերմանացիներն են սկսել օգտագործել՝ 15-16-րդ դարերում: Ռուսաստանում այն

լայնորեն գործածվել է Եկատերինա 2-րդի օրոք, նաև որպես դեկորատիվ բույս: 18-րդ դարում սկսեցին օգտագործել քարավուզի արմատները: Այժմ այն լայն տարածում ունի բոլոր երկրներում:

Գոյություն ունի նեխուրի (քարավուզի) մի քանի տեսակ: Տերևավոր նեխուրը՝ *Apium Graveolens secalinum* ունի խոշոր, սուր հոտով տերևներ: Այն վիտամինների իսկական շտեմարան է: Կոթունավոր նեխուրը՝ (*Apium Graveolens dulce*), ունի երկար՝ 60-70 սմ-անոց սպիտակ, կանաչ կամ վարդագույն կոթուններ: Նրանից պատրաստում են աղցաններ, խաշում են և տապակում: Արմատավոր նեխուրը՝ *Apium Graveolens rapaceum*, ունի խոշոր, մսոտ արմատ, որն ուտում են պանիրով՝ որպես աղցան, ավելացնում են տարբեր ապուրների մեջ: Վայրի նեխուրը հանդիպում է Միջերկրածովյան երկրներում՝ գետերի, լճերի ափերին:

Նեխուրը պարունակում է բազմաթիվ վիտամիններ՝ A, B₁, B₂, B₃, B₅, B₆, C, PP, U, E, K, բջջանյութ, եթերայուղ, կալիումի միկրոէլեմենտներ, կալցիում, ցինկ, երկաթ, ֆոսֆոր, բոր, քլոր, մագնեզիում, ծծումբ: Հիպոկրատը գրում էր, որ նյարդային խանգարումների դեպքում նեխուրը պետք է և սնունդ լինի, և դեղամիջոց: Նեխուրը

հատկապես հարուստ է մագնեզիումով: Մագնեզիումի պակասը հանգեցնում է անհանգստության ու վախի զգացումին, մարդը դառնում է դյուրագրգիռ, շուտ է հոգնում, գերզգայուն է դառնում եղանակի փոփոխությունների հանդեպ: Նեխուրի մեջ պարունակվող նատրիումը կանխարգելում է օրգանիզմում աղերի կուտակումները:

Ժողովրդական բժշկությունը նեխուրի եփուկն օգտագործելով՝ խորհուրդ է տալիս փորկապության, միգրենի, միզաքարային հիվանդությունների, ռևմատիզմի, հոդատապի, երիկամների հիվանդության, նյարդային խանգարումների ժամանակ: Նեխուրը բարձրացնում է օրգանիզմի դիմադրողականությունը, այն նպաստավոր է ֆիզիկական և մտավոր աշխատանքով զբաղվողների համար: Նեխուրն օրգանիզմում ավելորդ ճարպերն այրելու համար բուսական ծագում ունեցող լավագույն միջոցն է, պարզապես այն անփոխարինելի է ճարպակալման դեմ: Նեխուրի արմատների թարմ հյութը խմել 1-2 թեյի գդալ, ուտելուց կես ժամ առաջ՝ օրը երեք անգամ: Սննդաբանները նիհարել ցանկացողներին խորհուրդ են տալիս ամենօրյա ճաշացանկի մեջ ներառել թարմ նեխուր՝ աղցանների և ապուրների տեսքով:

Նեխուրի պատրաստուկները խոչընդոտում են աթերոսկլերոզի զարգացմանը և իջեցնում արյան ճնշումը: Այս հիվանդությունների կանխարգելման համար խորհուրդ է

տրվում նեխուրն ընդգրկել կերակրացանկում: Մաշկային հիվանդությունների դեպքում օգնում է նեխուրից պատրաստված քսուրը: Նեխուրի տերևները լավ տրորել սերուցքային կարագի հետ՝ 1:1 հարաբերությամբ: Կոսմետիկ նպատակներով կանաչ նեխուրն օգտագործում էին դեռ հին ժամանակներում՝ համոզված, որ այն կախարդական բույս է և կարող է երկար տարիներ պահպանել երիտասարդությունը: Այն մեծ քանակությամբ խորհուրդ չի տրվում օգտագործել հղի կանանց և կերակրող մայրերին, քանի որ դա կարող է վիժման պատճառ դառնալ: Սերմերը լայնորեն օգտագործվում են դեղագործության եւ օժանդակի արտադրության մեջ: Վերացնում է քաղցի զգացումը, լավացնում է մարտողականությունը, ամրացնում է դիմադրողականությունը: Տերևները և ցողունը օրգանիզմը մաքրում են շլակներից և թունավոր նյութերից: Մա-

կերներին խորհուրդ է տրվում անպայման քարավուզ օգտագործել, քանի որ այն օգնում է սպիտակուցների յուրացմանը, խթանում է ստամոքսաղիութի առաջացմանը, կանխում է գազերի և թարախային պրոցեսների հնարավոր առաջացումը: Ճարպակալման դեմ պայքարելու, նաև նյութափոխանակությունը կարգավորելու համար խորհուրդ է տրվում սննդակարգի մեջ հնարավորինս շատ ընդգրկել քարավուզի տերևները, ցողունը և արմատները: Քարավուզի հյութը՝ էսենցիան, կլանիչ հատկություն ունի և օրգանիզմից արագորեն կլանում է վնասակար նյութերը, այդ թվում՝ բժշկական դեղամիջոցների թե՛ օգտակար և թե՛ վնասակար նյութերը: Այդ պատճառով վտանգավոր է քարավուզի հյութ օգտագործել կարիճի կամ օձի խայթոցից հետո:

Լիլիթ Գասպարյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵԿԵԼ Է LUTIK-Ի ԺԱՄԱՆԱԿԸ

**Մեր կարգախոսն է՝
«Բարձր որակ, միջին գին»**

Ինչպե՞ս հաղթահարել գարնանային հոգնածությունը

Գարնան մոտենալուն պես հոգնածությունը, քնկորությունը, գրգռվածությունը և վաղ ինքնազգացողությունը դառնում են շարժերի մշտական ուղեկիցները: Դրա պատճառը, այսպես կոչված գարնանային հոգնածությունն է: Հենց այս ժամանակահատվածում է տեղի ունենում աշնանը և ձմռանը ոչ իր ամբողջ հնարավորություններով աշխատող մեր օրգանիզմի բոլոր կենսական կարևոր գործընթացների փոփոխությունը:

Բոլորս էլ գոնե մեկ անգամ ինքներս մեզ հարց ենք տվել, թե ինչու ենք գարնանը մեզ այդքան վատ, թույլ և ճնշված զգում: Իսկապես, ոչ աշնանը, ոչ ձմռանը կամ ամռանը մարդն այդքան հոգնած և ճնշված չի լինում: Խնդիրն այն է, որ գարնանը օրը երկարում է, իսկ դրա հետ միասին մեծանում է Երկրի մագնիսական դաշտի լարումը: Մեր ներքին կենսաբանական ժամացույցն արձագանքում է այդ փոփոխություններին: Մեծանում է նյարդային համակարգի լարվածությունը, մարդն ավելի զգայուն է դառնում ցրտի նկատմամբ, ակտիվանում են բորբոքային պրոցեսները: Ցավոք պետք է նշել, որ երկար ձմռան պատճառով թուլացնում է մեր դիմադրողականությունը, նաև սպառվում է վիտամինների պաշարը:

Գարնանային հոգնածության խնդրով զբաղվող բժիշկները խորհուրդ են տալիս ընդունել պոլիվիտամինային կոմպլեքս, սակայն կան նաև պարզ, ժողովրդական միջոցներ, որոնք

նույնքան օգտակար են: Եվ այսպես, ինչ պետք է անել:

- Առավոտյան մարմինը շփեք սառը ջրով թրջած սրբիչով կամ ավելի լավ է կոնտրաստային ցնցող ընդունեք:
- Փորձեք ամեն օր մեկ բաժակ կաթ խմել՝ մեկ գդալ մեղրով կամ դադի թեյ:
- Եթե ուժեղ ֆիզիկական հոգնածություն եք զգում, կերեք մեղրի և կեղևով կտրատած կես կիտրոնի խառնուրդ:
- Ավելի շատ մրգեր և բանջարեղեն կերեք:
- Շաբաթվա ընթացքում սննդակարգում 1-2 անգամ սխտոր օգտագործեք:
- Քնեք օդափոխված, զով սենյակում:
- Ցանկացած աշխատանք հերթափոխեք հանգստի հետ:

• Ամեն օր գոնե մեկ ժամ զբոսնեք:
Կարող եք պատրաստել վիտամիններով հարուստ թուրմ: Իրար խառնեք մեկական թեյի գդալ չոր եղինջ, մանդիկ (сирень) և մասուրի տրորած պտուղներ: Վրան ավելացրեք 1,5 բաժակ եռման ջուր, թրմեք 2-3 ժամ և ամբողջը խմեք քնելուց առաջ: Իսկ առավոտյան պետք է քաղցած վիճակում ուտել 1թ.գ. մեղրի և ձիթապտղի յուղի խառնուրդ: Բուժման կուրսը մեկ ամիս է: Այսպիսի բուժումը փափուկ և աննկատ կմաքրի օրգանիզմը կուտակված խարամներից և կօգնի հեշտ հաղթահարել գարնանային հոգնածությունը:

Առողջ եղեք:

Հարգելի քաղաքացիներ,

Տեղեկացնում ենք, որ Գյուղատնտեսական հանրագիտարան ձեռք բերելու համար կարող եք զանգահարել 011 52 48 34 հեռախոսահամարով:

Հանրագիտարաններն առկա են նաև Գյուղատնտեսության աշակցության մարզային կենտրոններում, ինչպես նաև՝ «Նոյան Տապան» և «Բուկինիստ» գրատներում:



ԾԱՐՈՒՆԱՎՈՐՄԱՆ Ե 2017 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«ԱԳՐՈՐԱՏՈՒ» թերթ	«ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագիր
1 համարի գինը՝ 120 դրամ	1 համարի գինը՝ 1350 դրամ
6 ամսվանը՝ 1980 դրամ	6 ամսվանը՝ 4050 դրամ
1 տարվանը՝ 3960 դրամ	1 տարվանը՝ 8100 դրամ

Թաժանորդագրությունը իրականացնում են՝

- ✓ Գյուղատնտեսության աշակցության հանրապետական և մարզային կենտրոնները
- ✓ «Նախույտ»
- ✓ «Չայմաուկ»
- ✓ «Պրես-Արտաշես»

Կազմակերպությունները